# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Վառելիքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հուլիսի 03-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/5» պայմանագրում 2019 թվականի հուլիսի 04-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1-Ֆինանսական պարտավորությունների ստանձնում:

Փոփոխության նկարագրություն-Հաստատվել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման դիմաց վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում-«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ կետ, 03.07.2019թ. կնքված N «ՆՍԾՏԻԿ- ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման պայմանագրի 8.5 և 8.15-րդ կետերը, ինչպես նաև հաշվի առնելով որ ֆինանսական միջոցները նախատեսվել են:

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2019թ. հուլիսի 03-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **«04» «հուլիսի» 2019թ.**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 03.07.2019թ. կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ապրանքների մատակարարման համար նախատեսված ֆինանսական միջոցները առկա են, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան

1.1 Հաստատել Պայմանագրի 2019 թվականի համար ֆինանսական պարտավորությունների կատարման (վճարման) ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի (կցվում է):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ապրանքների մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը (ներառյալ հավելվածը) կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն
------------------------ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 1
Բանկը՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 1660006430550100
ՀՎՀՀ 02665864
Տնօրեն
------------------------ Ա. Դանիելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*« 04 » հուլիսի 2019թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*

*Հավելված N 2*
*«03» հուլիսի 2019թ. կնքված*
*N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132100/504 | Բենզին պրեմիում | - | - | - | - | - | - | 860 000 | 1 720 000 | 1 720 000 | 1 720 000 | 1 720 000 | 1 720 000 | 1 720 000 |

*Վճարման ենթակա գումարները նշված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ջեյթուն մ/ճ
ՀՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն
------------------------ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 1
Բանկը՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1660006430550100
ՀՎՀՀ 02665864

Տնօրեն
------------------------ Ա. Ղանիեյան
(ստորագրություն)
Կ.Տ.